ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

25 դեկտեմբերի 2012 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8/2 Ա

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 8-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Մասնակցում էին՝ Երևանի ավագանու 48 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետի մամլո քարտուղարը, աշխատակազմի ֆինանսական, իրավաբանական, անշարժ գույքի կառավարման, կազմակերպական, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունների պետերը:

Նիստին ներկա էին ՀՀ ԶԼՄ-ի ներկայացուցիչներ:

Երևանի քաղաքապետ Տ.Մարգարյանը ներկայացրեց Երևանի ավագանու 8-րդ նստաշրջանի արտահերթ նիստի օրակարգը.

1. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N356-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 28-ի N535-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

3. Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղ կազմակերպելու իրավասությունը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վերապահելու մասին:

4. Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

5. Գույք ընդունելու մասին:

6. Երևան համայնքի սեփականություն համարվող տարածքն անհատույց օտարելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N356-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Արևշատյանը:

«Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N356-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1.Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի մասին» N 356-Ն որոշմամբ հաստատված.

1) եկամուտների գումարն ավելացնել 49.5 հազար դրամով,
2) ծախսերի գումարն ավելացնել 49.5 հազար դրամով:

2.Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2012 թվականի բյուջեի մասին» N356-Ն որոշմամբ հաստատված NN1-4 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN1-5 հավելվածների:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 48
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

2. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 28-ի N535-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

«Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 28-ի N535-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 28-ի «Երևանի քաղաքային համայնքում տեղական տուրքերի 2013 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» N 535-Ն որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 1-ին ենթակետի «ե» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ե. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 350000 դրամ.»,

2) 1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «զ» պարբերությունով.

«զ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 700000 դրամ.»,

3) 4-րդ ենթակետը «ոգելից» բառից հետո լրացնել «և ալկոհոլային» բառերով,

4) 6-րդ ենթակետի «ա» պարբերությունում «500 դրամ» բառերը փոխարինել «500 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար» բառերով,

5) 6-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ» պարբերությունով.

«դ. հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ գոտիավորման, սահմանվում է համաձայն N 3 հավելվածի,

(4-րդ գոտում ընդգրկվում են N3 հավելվածում չներառված փողոցներն ու տարածքները)։»։

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 11.1-ին ենթակետով.

«11.1. Երևանի քաղաքային համայնքի անվանումն ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 200000 դրամ։»։

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 48
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

3. ԼՍԵՑԻՆ – Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղ կազմակերպելու իրավասությունը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վերապահելու մասին։

ԶԵԿՈՒՅԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը։

«Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղ կազմակերպելու իրավասությունը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց վերապահելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը։

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևանի քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականությունը հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում վճարովի ավտոկայանատեղ կազմակերպելու իրավասությունը վերապահել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց։

2. Հավանություն տալ Երևանի քաղաքապետարանի կողմից բանակցային ընթացակարգով՝ ավտոկայանատեղ կազմակերպելու ծառայությունների ձեռքբերման նպատակով նախաձեռնած գնման գործընթացին։

3. Սահմանել ավտոկայանատեղ կազմակերպելու ծառայությունների ձեռքբերման պայմանագրի հետևյալ հիմնական պայմանները.

1) պայմանագրի ժամկետը՝ 10 տարի.

2) ավտոկայանատեղ կազմակերպելու ծառայությունների մատուցման դիմաց վճարվող պայմանագրային գինը՝ փաստացի հավաքագրված տուրքի և գանձված վարչական տուգանքի հանրագումարի ոչ ավել քան 70%-ը, ներառյալ՝ ավտոկայանատեղի կազմակերպման հետ կապված ավտոկայանատեղի կազմակերպչի բոլոր ծախսերը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 48
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

4. ԼՍԵՑԻՆ – Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող մի շարք հողամասեր փոխադրել այլ նշանակության հողամասերի կատեգորիա՝ համաձայն հավելվածի:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 48
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

5. ԼՍԵՑԻՆ – Գույք ընդունելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Որպես նվիրաբերություն ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից դյուրակիր համակարգիչ (Notebook) Fujitsu LIFEBOOK AH531: S/N YLDN283811 1 հատ 228.000 ՀՀ դրամ արժողությամբ գույքը՝ դրա նպատակային նշանակությամբ օգտագործելու պայմանով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 48
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

5. ԼՍԵՑԻՆ – Երևան համայնքի սեփականություն համարվող տարածքն անհատույց օտարելու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Աբովյան փողոցի հ.22 շենքի 66.8քմ ընդհանուր մակերեսով տարածքը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Մարիյա Օվակիմյանին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 48
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ԸՆԴՄԻՋՈՒՄ՝

Նիստը վերսկսվեց ժամը 10.35-ին:

Երևանի ավագանու անդամների բանավոր հարցերին տրվեցին պատասխաններ /սղագրությունը կցվում է/:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Արձանագրեց՝
Ն. Ղուկասյանը